ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆԵՐ

Մայիսի 14-ից 15-ը տեղի ունեցավ սովետահայ գրականության հարցերին նվիրված միացյալ գիտական սեսիա, որը կազմակերպել էին Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը և Հայաստանի սովետական գրողների միությունը։ Սեսիան ներածական խոսքով բացեց գրողների միության վարչության առաջին քարտուղար Էդ. Թոփչյանը։ Նա ընդգծեց ժամանակակից սովետահայ գրականության պրոբլեմների գիտական լուսաբանության անհրաժեշտությունը մեր երկրի գրականության և արվեստի գործիչներին առաջադրված նոր, պատասխանատու խնդիրների հաջող կենսագործման համար։

Գրականագետ Վ. Մնացականյանի զեկուցումը նվիրված էր 1961—1962 թթ. սովետահայ պոեզիայի վերլուծությանը։ Քննարկելով այդ ժամանակաշրջանում մեր անվանի և երիտասարդ բանաստեղծների հրատարակած ժողովածուները, ինչպես և պարբերական մամուլում լույս տեսած չափածո գործերը, զեկուցողն արեց մի շարք դիտողություններ՝ հիմք ընդունելով կյանքի և պոեզիայի սերտ կապի, գրականության ժողովրդայնության ու լենինյան պարտիականության չափանիշը։

«Սովետահայ ժամանակակից վեպը» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների թեկնածու Զ. Ղուկասյանը։ Նա նշեց ինչպես վերջին տարիներին սովետահայ վիպագրության մեջ նկատված առաջընթացը, այնպես էլ տեղ գտած լուրջ թերությունները։

Բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Զաքարյանի զեկուցումը նվիրված էր սովետահայ գրականագիտության և գրական քննադատության արդի վիճակին։ Զեկուցողը մանրամասնորեն կանգ առավ «Հայ նոր գրականության պատմություն» և «Սովետահայ գրականության պատմություն» ուսումնասիրությունների վրա՝ նշելով նրանց և՛ առավելությունները, և՛ սխալներն ու վրիպումները։ Այնուհետև նա վերլուծեց վերջին տարիներին լույս տեսած գրականագիտական մենագրություններն ու տեսական-քննադատական հոդվածները։

«Սովետահայ պատմվածքը արդի էտապում» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Արզումանյանը։ Գրականագետ և գրող Խ. Դյուլնազարյանը սեսիայում զեկուցեց սովետահայ մանկական գրականության մասին։

Հայ խոշորագույն լեզվաբան Հրաչյա Աճառյանի հիշատակին էր նվիրված Երևանի պետական համալսարանի և ՀՍՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտի միացյալ գիտական սեսիան, որը տեղի ունեցավ մայիսի 16—17-ին։ Համալսարանի գիտական մասի պրոռեկտոր դոցենտ Վ. Նալբանդյանի բացման խոսքից հետո «Հրաչյա Աճառյանի կյանքը և գործը» թեմայով զեկուցում կարդաց Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Է. Աղայանը։ Լազերևի ուսումնասիրման գործում Հ. Աճառյանի ներդրած խոշոր ավանդի մասին սեսիայում զեկուցեց Վրացական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ա. Չիկոբավան։ Զեկուցումներով հանդես եկան նաև Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամներ Լ. Մելիքսեթ-Բեկը («Հ. Աճառյանը և Սայաթ-Նովայի պրոբլեմը») և Գ. Սեվակը («Լեզուն որպես ազգային մշակույթի բաղադրիչ»), պրոֆ. Գ. Ջահուկյանը («Ուրարտերենը և հնդեվրոպական լեզուները») և դոցենտ Հ. Բարսեղյանը («Հ. Աճառյանը հայոց լեզվի պատմության ուսումնասիրող»)։

Մեծ գիտնականի մասին հետաքրքիր հուշեր պատմեցին Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Ս. Գ. Հովհաննիսյանը, ԳԱ թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը և պատմական գիտությունների թեկնածու Ս. Բարխուդարյանը։

Ա. Գ.

ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈՆԵՐ

Ապրիլի 26-ին Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցավ մեծարման երեկո՝ նվիրված Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ,



գիտության վաստակավոր գործիչ Մոբուս Ստեփանի Հասարյանի ծննդյան 60 և գիտական-մանկավարժական գործունեության 40-ամյակին։

Երեկոն ներածական խոսքով բացեց ինստիտուտի ռեկտոր Վ. Համազասպյանը։ Այնուհետև պրոֆ. Ս. Հակոբյանը հանգամանորեն պատմեց հոբելյարի կյանքի և գործունեության մասին։ Մ. Հասրաթյանը երկար տարիներ եռանդուն, բեղմնավոր աշխատանք է կատարել գիտական տարբեր հիմնարկներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ ՀԿՊ Կենտկոմի պարտիայի պատմության ինստիտուտում, Ռևոլյուցիայի թանգարանում, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության և գրականության ինստիտուտներում, Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում և այլուր։

Մ. Հասրաթյանը խոշոր աշխատանք է ներդրել ականավոր լենինյան Սուրեն Սպանդարյանի հոդվածների ժողովածուները կազմելու, խմբագրելու և հրատարակելու գործում։ Նա հայ ժողովրդի պատմության դասագրքի հեղինակներից և խմբագիրներից մեկն է։ Առանձնապես նշանակալից են Մ. Հասրաթյանի գիտական հետազոտությունները հայ ժողովրդի XIII—XVIII դարերի պատմության կնճռոտ հարցերի լուսաբանման առաջարկում։ Հոբելյարը նույն հմտությամբ զբաղվել է նաև բանասիրությամբ՝ գիտության այդ մարդում ևս ստեղծելով նշանակալից արժեքներ։ Երկար տարիներ նվիրելով սայաթնովագիտությանը, Մ. Հասրաթյանը անգնահատելի ավանդ է ներմուծել մեծ բանաստեղծի գրական ժառանգության խոր ու բազմակողմանի ուսումնասիրության, նրա բազմաթիվ խաղերի նոր մեկնաբանության, թարգմանության ու ծանոթագրության գործում, կատարելով բանասիրական և տեքստաբանական այնպիսի գիտողություններ, վերծանումներ ու շտկումներ, որոնք ունեն գիտական մեծ արժեք։

Զեկուցողը մանրամասնորեն կանգ առավ նաև հոբելյարի մանկավարժական գործունեության վրա, բնութագրելով նրան իբրև մեր հնագույն և հմուտ մանկավարժներից մեկը, որը դաստիարակել է գիտաշխատողների և ուսուցիչների մի քանի սերունդ։

Հոբելյարին ջերմորեն ողջունեցին Հայկական ՍՍՌ մինիստրների սովետի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի նախագահ Գ. Հայրյանը, լուսավորության մինիստր Շ. Սիմոնյանը, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի կողմից՝ ակադեմիկոսներ Ա. Ղարիբյանը և Ս. Երեմյանը, պրոֆ. Ռ. Առաքելյանը, Ա. Ղանալանյանը, Երևանի պետական համալսարանի պրոռեկտոր Վ. Նալբանդյանը, ՀԿՊ Լենինականի բաղկոմի բարտուղար Գ. Ղարիբջանյանը, Հայկական մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր Ա. Բարայանը, Ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի կողմից՝ Ռ. Մելքումյանը, Հեռակա մանկավարժական ինստիտուտի կողմից՝ Շ. Հարությունյանը, արվեստի ինստիտուտից՝ Ս. Բալթյանը, Սիսիանի շրջանի Լոր գյուղի դրպրոցի ուսմասվար Գևորգյանը, ճարտարապետների միության անունից՝ Վ. Հարությունյանը և ուրիշներ։ Կարդացվեցին հոբելյարի անունով Մոսկվայից, Թբիլիսիից, Բաքվից և Միության այլ քաղաքներից ստացված հեռագրերը։

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ հոբելյարը։

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

* * *

Հայկազ Գաբրիելի Ասլանյանի ծննդյան 60 և գիտա-մանկավարժական գործունեության 35-ամյակին էր նվիրված մայիսի 25-ին Հայկական ՍՍՌ ԳԱ նիստերի դահլիճում կայացած մեծարման երեկոն։ Փիլիսոփայության և իրավունքի սեկտորի ավագ գիտ. աշխատող, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Յա. Խաչիկյանի բացման խոսքից հետո հորելյարի կյանքի ու գիտա-մանկավարժական գործունեության մասին զեկուցեց սեկտորի գիտնական քարտուղար, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Դ. Գրիգորյանը։

Հայկազ Ասլանյանը,—նշեց զեկուցողը,—Սովետական Հայաստանում փիլիսոփայական ճակատի հնագույն աշխատողներից մեկն է։ Սկսած 1928 թ. նա ծավալում է ակտիվ պրոպագանդիստական-դասախոսական և գիտակազմակերպչական գործունեություն, զգալի ուժանք մուծելով մեր ռեսպուբլիկայում մատնագիտական կադրեր պատրաստելու, աշխատավորության գաղափարական դաստիարակության և փիլիսոփայության ինագավառում գիտա-հետազոտական աշխատանքները ղեկավարելու գործում։ Հ. Ասլանյանի գրչին են պատկանում դիալեկտիկական մատերիալիզմի առաջին ինքնուրույն հայերեն դասագիրքը (1930), մի շարք բրոշյուրներ և բազմաթիվ հոդվածներ՝ նվիրված դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի և ռուս փիլիսոփայության պատմության կարևոր հարցերին, ինչպես նաև ժամանակակից բուրժուական փիլիսոփայության և սոցիոլոգիայի քննադատության։ Վերջերս նա ավարտել է հասարակական պրոգրեսի և պատմության փիլիսոփայության վերաբերյալ ժամանակակից բուրժուական ըմբռնումների քննադատությանը նվիրված իր ծավալուն աշխատությունը։ 1948—1956 թթ. ղեկավարելով ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի թարգմանությունների սեկտորը, Հ. Ասլանյանը ակտիվ մասնակցություն է ունեցել մարքսիզմի կլասիկների բազմաթիվ աշխատությունների հայերեն թարգմանության կարևոր գործում։

Գիտա-մանկավարժական գործունեության և կադրերի պատրաստման գործում մատուցած



ծառայությունների համար Հ. Ասլանյանը երկու անգամ (1941 և 1945 թթ.) պարգևատրվել է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի պատվոգրով։ Ծննդյան 60 և գիտա-մանկավարժական գործունեության 35-ամյակի կապակցությամբ հորելյարին շնորհվեց Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում։

Մեծարման երեկոյին Հ. Ասլանյանին շնորհավորական ջերմ խոսքեր ուղղեցին ռեսպուբլիկայի բազմաթիվ գիտա-հետազոտական հիմնարկների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները։ Հորելյարի անունով ստացվել էին ողջույնի հեռագրեր Միության փիլիսոփայական շատ հաստատություններից և առանձին անձանցից։

Երեկոյի վերջում շնորհակալության իր խոսքն ասաց հորելյարը։

Դ. Դ.